


190  
C II.2







Հ Ա Ս Յ Է

Rédaction du Journal arménien

ARCHALOUYCE

LE CAIRE (EGYPTE)

Ձի հրատարակումս ձեռագիրները  
ևս չեն սրտիր :

Բաժանորդագրութիւնը կանխիկ է, իսկ  
ծանուցումները կ'ընդունուին մասնա-  
ւոր նստանսայնութեամբ :

Բարձրագոյն Կոնգրեսի քննարկ  
ԵՂԻՅԷ ՓՈՐՐՈՍԵԱՆ



ԱՐՇԱԼՈՅՍ ԿԵ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ Ծ Ա Բ Ա Ք ՕՒ ԵՐԸ

Շ Ա Բ Ա Ք Օ Ւ Ե Ր Ը

ՊԱՅՏԱՆ

ԵՊԻՊՏՈՍ

Տարեկան դրո- ողջ 30

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Տարեկան քրակց 10

Պատանոցի 3ԱԻԵԼՈՒՄ ՅԵՐՈՒ ՓՈՒՍԿԵՆ  
ՎԵՐՈՒՄԷ զԵՐՈՒ ԱԻՍԻ ԸՆԿԱՆ :

Թե՛ ԱՐՇԱԼՈՅՍԻ եւ թե՛ ՏՊԱՐԱՆԻՆ  
վերաբերեալ նկարակալ խնդրոց հաւետար  
պիտէ Կ ղիւնի ներքազրուքեան հասցեով  
քերթիս Մասնախարիկ, որ է՝

ԳՆՈՐԻ ՓՈՒՓԱՋԵԱՆ

ԱՐՇԱԼՈՅՍ ԿԵ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ Ծ Ա Բ Ա Ք ՕՒ ԵՐԸ

ZUSE 20 ՓՈՒՐԱ ՈՂՋ

ՍՐՇԱԼՈՅՍ  
ԻՐ ԸՆԹԵՐՅՈՂՆԵՐՈՒՆ  
1 ՅՈՒՆԻՍԻՐ 1908

ՀԱՅՅՐԻԿ ՀՈԳԵՎԱՐ

Հոգին յօժար էր, այլ մարմինը՝  
տկարս կուգէր պատերազմը  
չարունակել ներքին և արտաքին  
խառնակում գէ՛մ, ինքը՝ որ լոյս  
մ'էր Լոյսէն ընտրեալ, և այդ գործին  
համար մարմնացած։ Բայց բեր-  
բեղացած ինսնամեայ ոսկրակազմը  
անկարող էր այլևս հոգեկան տա-  
ռապանքին ճնշումը տանել։ Հանգ-  
չելու որոշեալ ժամը հասած էր։  
Հոգին կ'ըսէր « Հայոց Հայրիկ  
չմեռնիր », բայց մարմինը արշաւա-  
սոյր դէպ ի հող կը վազէր, երկար  
ժամանակէ ի վեր մօրձէն զատուած  
որդւոյ մը կարօտով։  
Նա « ապրեցաւ մեղի համար »  
եր հօտէն ինդրելով որ « մենք ալ  
Քրիստոսի համար ապրինք »։ Քրիստոս,  
Որդի Մարդոյ, ապրած և տառա-  
պած էր ամբողջ աշխարհներու հա-  
մար։ Մկրտիչ, Որդի Կնոջ, հազիւ  
կարող էր ապրել ազգի մը համար։  
Յիսուս՝ Քրիստոս եղաւ, եր « Սիրե-  
ցէք զմիմեանս » ով և իր դահիճնե-  
րուն համար աղօթելով։ Հայրիկ Խը-  
րիմեան՝ Հովնապետ եղաւ իր Սի-  
րոյ քարոզութիւններով և զանոնք  
գործադրելով։  
Ճշմարիտ Սէրը, որ երկնային  
տաճարէն կը բղխի, և ամբողջ է-  
ութիւնը կ'ընդգրկէ, իր մէջ կը պա-  
րունակէ Անճնազոհութիւնը։  
Այդ Սէրն է որ Քրիստոսը խաչ  
կը հանէ և խրիմեաններուն ըսել  
կուտայ « Նա ապրիմ ձեզի համար,  
գուք ապրեցէք Քրիստոսի համար »։  
Ազատութիւն, Հաւասարութիւն  
եղբայրութիւն, ահա այդ մեծ Սէրին  
նշանակութիւնը, որ վերջն ի վերջոյ  
պիտի տիրապետէ երկրես վրայ,  
բոլոր օրինադիրքերը ջնջելով։  
Հայրիկ իր ամբողջ կեանքին մէջ  
և մանաւանդ Կաթողիկոսական դա-  
հին վրայ՝ կանխատեսութեամբ՝ նոր

աշխարհը աւետող կարապետ մը ե-  
ղաւ, և միանգամայն մկրտիչ, քա-  
նի որ ազգին փրկութեան համար  
Սէրով մկրտուելու պէտքը զգացուց-  
նա երբէք չ'ըսաւ, բայց միշտ հաս-  
կցուց թէ՛ ականջ պէտք է լսելու  
համար, և սիրտ՝ զգալու համար։  
Եւ ի՞նչ է ազգի մը անդամներուն  
իրարու հետ ընդգրկումը, եթէ ոչ  
քայլ մը՝ համաշխարհային ընդգր-  
կումի երկնակաւէտ ճամբուն վրայ։  
Նախախնամական է այս բարեշնչու-  
մը. ուստի կը սխալին ամեն անոնք ո-  
րոնք կը կարծեն թէ Հայրիկ խօսքերը  
« Չայն բարբառոյ յանապատի » ըլ-  
լալու տաճարներու են։  
Կենդանարար զօրութիւնը որ-  
քան խոյս կուտար հինցած մարմի-  
նէն, հոգեկան կարողութիւնը այն-  
քան աւելի կը զօրանար։ Եւ այն  
միջոցին ուր Հայրապետական բազ-  
մախոյ սիրտը բազմախէ կը դադրէր,  
աչքերը իրենց երկրային խաւար  
պայծառութիւնը կը կորսնցնէին,  
կայծնները կը փայտանային, Առա-  
քելական Աթոռոյն միանձունք բեր-  
դունակ զգացումներով « ի խորոց ան-  
դընդոց ՚ի կը պատրաստուէին, Հայ-  
րիկին հոգին՝ նուազ կաշկանդեալ  
և աւելի յատկատես կանթեղատա-  
տան կը մորմնէր գլխուն վերեւ,  
իւր վաղորդայնով մոտանալ։  
Յանկարծ զգաց հոգեաւ հրեշ-  
տակին վայրէջքը դէպ իրեն, եր-  
կինքը ճեղքելով և ամպերը պատ-  
ուելով. և՛ դողահար՝ կթոտեցաւ  
Անպարագրելի լոյսով մը չըջապատ-  
ուած էր և ուշադրոյս մնաց « Ազ-  
ղոյն քեզ, ով Կենսալից » բառերուն  
առջև։ Յառաջացած մարմնակրծ  
հոգիներուն առաւելութիւններէն  
մին ալ այն է թէ բառերուն գի-  
տութիւնն ունի։  
« Կենսալից . . . կակալեց Հայոց  
Հայրիկ, ի՞նչ ըրի որ, ես, Կնոջ  
թշուառ որդի, եղբ'ւկ ինձ »  
Լուսաշող Հրեշտակը պատաս-  
խանեց. « Կնոջ պարտակատար որդին  
մօտ է Որդւոյ Մարդոյ, ինչպէս Որ-  
դի Մարդոյ մօտ է Տիեզերաց Ա-  
բարիին։ Մածկատեսը միայն կարող է  
քննել էակներուն սիրտը. ինձ նման  
խոնարհ ծառաներ արարքներուն  
վրայ կը դատեն։ Արդ, դու բարի

գործեցիր, ա՛յնքան որքան քեզի  
տրուած էր։ Խաչեցեալը ժպտուն  
տեսայ, երբ քու քովը կ'իջնէի և  
Մահու գերբն մէջ անունդ չ'ընչ-  
մարեցի։  
— Մեղաւո՛րս . . . մրմնաց  
Հայրապետը գլխահալ։  
Յանկարծ անպատմելի երկիւ-  
ղածութեամբ բազկատարած գոչեց.  
— Տէ՛ր, « Արդարութեամբ մի՛  
դատեսցես, այլ Կթութեամբ քո  
քաւեսցես »։  
— Դո՛ւ, ըսաւ Երկնաբնակը ու-  
րախութեամբ համակուած, չ'անար-  
գէջիր ընտանեկան կապը, ի սկզբանէ  
հաստատուած. բայց և չ'ընդվզեցար  
Ամենակալին վճռոյն դէմ, յամա-  
ւարար վերսկսելով ամուսնական  
կենցաղը։ Յետոյ երկնայնոյ պաշտօն-  
ներու դ մէջ, ո՛չ թէ քու՝ այլ քոյր-  
ցըդ նիւթական, բարոյական և մը-  
տաւորական զարգացումը կէտ նպա-  
տակի ըրիր։ Քու օրովդ, Աստուածա-  
նուէր Ս. Տաճարներ չ'զարգարուե-  
ցան այրիներէ, անկեալներէ, ան-  
բազմերէ կորցուած ոսկիներով.  
Տիրամայրին պատկերը գոհարներու  
տակ չ'աներևութացաւ, մինչդեռ ան-  
տէր մանկունք, անկար ծերունիք,  
անոք կանայք սոխամահ կը տառա-  
պէին։ Քու քսակը լեցուն չ'մնաց  
մինչդեռ փողոցին անկիւնը հրեշ-  
տականման կոյսեր իրենց անմեղա-  
թիւնը կը ծախէին հիւանդ մօր մը,  
ախտացեալ հօր մը դեղ ու դար-  
ման, հաց ու կրակ հայթայթելու  
համար։ Սիրտը նուազեցաւ, աչքերդ  
արտասուեցին, մարմինդ փշաքաղե-  
ցաւ ի տես երկրային ազգի ազգի  
թշուառութեանց և ի տես պաշտօն-  
ակցայդ, անձնահամութեանց։  
« Եւ երբ նախախնամական  
թոյլտուութեամբ, Առաքելական Ա-  
թոռը բարձրացար, չ'զլացար քու Ա-  
ռաջնորդներուդ վերջույն մին առ-  
ջև։ Ականակուռ չաթալ թագին տակ,  
գլուխդ Քրիստոսի փշապսակը զգաց  
և մարդարտայն զաւազանը հովու-  
ական ցուպի փոխուեցաւ ձեռքիդ  
մէջ։ Չանիծեցիր, այլ տիրեցար և  
օրհնեցիր։ Օրհնեցիր մեծը, օրհնեցիր  
փոքրը, օրհնեցիր երկինքը, օրհնե-  
ցիր երկիրը, օրհնեցիր բարին, օրհնե-  
ցիր չարը, օրհնեցիր արքայութիւնը,  
օրհնեցիր դժուրը։ Օրհնեցիր ամեն

բան, վասնզի վստահ էիր Աստուծա-  
յին արդարութեան վրայ  
« Սէ եկուր, ո՛վ քաջ Հովիւ,  
հեռանանք յաստի, վերանանք դէպ  
յանդէն ».  
Եւ Հայրիկ հառաչեց.  
— Բայց Ա՛զգս . . . Ա՛զգս, ի՞նչ  
պիտի ըլլայ։  
Լուսափայլ Հրեշտակը պատաս-  
խանեց.  
— Բարձրեալը հաւասար սիրով  
կը գուրգուրայ իր բոլոր արարածնե-  
րուն վրայ, ամենափոքրէն մինչև ա-  
մենամեծը. հանքէն մինչև հանճարը։  
Քու ժողովուրդդ բացառութիւն մը  
չը կաշմեր։ Եթէ կուզէ յաջողիլ և  
յուրաջգիծել կեանքի պայքարին մէջ  
թող սէրով պատասխանէ Սիրոյ։  
Թո՛ղ իր ճակտին վրայ դրոշմէ և  
իւր ձեռքերուն վրայ քանդակէ  
Մարդացեալին յաւիտենական բառե-  
րը, զորս վերջին կոնդակիդ մէջ  
քոյսոց փողհարեցիր, իւր ողջոյն  
հրաժեշտի և ցոտութեան. « Սիրե-  
ցէք զմիմեանս » Օն ուրեմն, դէպ  
յաթոռն Անուսին։  
. . . . .  
Եւ մինչդեռ վաղը Հայաստան-  
եայց Մայր Եկեղեցւոյ զանդակներ  
Հայոց Հայրիկին վախճանը կը գու-  
ժէին տիրաթախիմ վէտվէտներով,  
ի բարձունս Սուրբերու թափոր մը  
կը կաղմուէր ընդառաջելու համար  
սրբուած հոգի մը, որ պաշտօնա-  
կատարութեանէն ետք՝ իր բնագաւա-  
ռը կը վերադառնար, այս անգամ  
աւելի լուսարձակ։  
Գահիրէ 1 Դեկ. ԱՐՄՍ  
Փաստաբան Ակերթ Յարութիւն Լ. Ս.  
Շահկեան՝ որուն գրութիւնները « Արշա-  
լոյս » ի նախորդ շրջանին մէջ միշտ գնա-  
հասում են ընթերցող հասարակութեան  
կողմէ՝ այս անգամ քերթիս վերերեւան  
առիթով խնայարարութեան որիւմ Կ յո-  
ւաններու շարք մը. որուն առաջին  
մասը կը հրատարակէի ի ստորեւ. յուսարով  
միակամակն թե՛ իր աշխատակցութիւնը  
եղանակ ալիսի ըլլայ. ի զոնացումն մեր  
ընթերցանի սրտայնոց։  
ԿԵՍՆԻԸ ԳԱՀԻՐԻԻ ՄԷՋ  
Ա.  
Սերճաւորապէս հոկտեմբերի վերջի  
քառօրէն կը սկսի ոչեւսրութիւնը  
Գահիրէի. անգործութեան չըջանը -մեռ-  
եալ եղանակը la saison morte ինչպէս

հոս կը կոչեն—վերջ կը գտնէ. Եղիպտոսացւոց ունեւոր զասակարգին մեծագոյն մասը— որը կանուխէն խոյս տուած էր անապատի կիզիչ խորշակէն և գացած ապաստան փնտած էր գլխաւորաբար Զուրիցերիոյ սարահարթներուն ստորոտը —արդէն վերադարձած կ'ըլլայ, եւ աշխարհիս չորս անկիւններէն զբոսաշրջիկները, որք ժամադրաւոր ընտրած են Նեղոսի հովիտը, կը փութան գունդագունդ դիմել: Պանդոկները կը լեցունին, Շէփհըրտոս, Գոնթինանդալ Կէզիբէ Բալաս եւ ուրիշներ յետմնացներուն կ'իմացնեն տեղ չի գտնուիր: Պանդոկներուն վարիչները արդէն կանխաւ ծրագրած են այդ ունեւոր հիւրերը կարելի եղածին չափ երկար հոս վար դնելու միջոցները, եւ պարբեր— small danceները—անմիջապէս կը սարքուին: Կ. մէն պանդոկ ունի իր թարգմանաւարները, մեծ մասամբ տեղացիներ, որք կ'ընկերանան զբոսաշրջիկներուն իրենց օրուան պտոյտին մէջ եւ այսպէսով կը խնայեն այս վերջիններուն կարգ մը անախորժ անակնկալներ:

Այս զբոսաշրջիկներուն մեծագոյն մասը ներկայացուցիչը են Անկլո—Սակսոն ցեղին, ըլլա՛յ հին աշխարհի ըլլա՛յ նոր աշխարհի. բոլորն ալ քիչ թէ շատ ունին իրենց նոյն բնորոշ դիմագիծերը նոյն շարժումները, նոյն շէշար. անոնցմէ մին անգամ մը խնդրով կ'ըսէր ինձ. «Մեր մէջ երեք բան մեծ է. կը գործածենք մեծ լայն տափաստ. ունինք մեծ թերթեր եւ մեծ ալ զբոսաշրջիկները»:

Երբ Անգլո—Սակսոններուն վրայ կը խօսիմ, կարելի է լեւեռայն անցնիլ ա՛յնքան շահեկան ա՛յնքան գրաւիչ իրենց գեղեցիկ կիսուն վրայ: Բայց անգլիկացւոց մէջ բան մը դիտած եմ. իրենց տղերքիկները անախորժէն տղերք են. պարզապէս կաշի ու ոսկոր. մէկ մեթր 95 բարձրութեամբ հասակ, անխուսափելի ակնոցը քիթերին, ըմբոստ քիթ մ'ալ դէմքերուն վրայ, Ս. Գրիքը կամ Պէտէկէրը(Ք) ձեռքերին, ամապանական քալուածքով, ի հարկին ասպարէզ կը կարգան վազը մըցման: Այս բոլորին մէջ իրենց ամուսիններուն համար միակ ոգեպնդող միթարական կէտը որ կայ այն ալ սա է թէ՛ այս վերջինք կրնան կատարելապէս հանգիստ քնանալ, որովհետեւ հաւանական է՛ որ իրենց կիներնուն արիւս մը պատահի:

Բայց ասոր հակառակ սիրուն գեղանի կիներն ալ կատարելապէս հակապակերը կը կազմեն: Գլխու պըտոյտ պատճառող դիւզիչ աչքեր, մանրիկ թաթիկներ, թարմ մորթ եւ ոսկեգոյն մազեր, ունին իրենց ուրոյն հագուստի կապուստի ձեւերը իրենց նիստ ու կացին մէջ կայ չ'ես գիտեր ինչ մը բարձրէն շնորհալի որ իրենց յատուկ է եւ որ հմուտին կը տարբերի լատին ցեղինէն:

Բարեբախտաբար ձմրան եղանակին հոս զիմոզներուն մէջ լայն տեղ մը կը գրաւեն այս վերջինները, որք կը աւելցնեն շուքը շնորհը Նեղոսի փերուն եւ... Բուքի շողեւաններուն. դժուարին ալ չ'է զիրենք տեսնելը, փողոցները, հոս ու հոն, իշու մը վրայ հեծած, ֆէլլաւն իշուպանը ետեւուն, կը վազեն ու կը վազեն, չ'ես գիտեր ուր...:

Մէկ կողմանէ այդ սիրուն անգլուհիներուն գեղը ու շնորհը, միւս կողմանէ չէփերուն տրցակը, որոնցմով թխմած են չորս կողմերին կրկնակի շահեկան կ'ընեն իրենց ներկայութիւնը Գահիրէի մէջ: Ահա այսպէս Գահիրէն կը սթափի ամբան իր խոր թմրութենէն:

Բ.

Եղիպտոս եղած է մին քաղաքակիրթ կեդրոններէն. իր պատմութիւնը դարէ մը ի վեր լոյս աշխարհ բերուած է շնորհիւ հանձարին Ֆրանսուա Շամպոլիոնի արձանագրութիւնը:

բոլորին, որը՝ ուրիշ ֆրանսացի գիտնականներու հետ՝ կ'ընկերանար Պոնաբարդի արշաւանքին եւ որ գտաւ բեւեռագիրներու ընթերցումը Փարաւոններու մնացորդները, մեծաւ մասամբ պահուած պահպանուած աւազներու ներքեւ, օրէ օր դուրս կը հանուին շնորհիւ ջանքերուն հնախոյզ մտքերու, եւ այդ հասակաւորները խոկման նոր հորիզոններ կը բանան Արեւմուտքի իմացականութեան առաջ:

Գահիրէ եւ իր շրջակայքերը հնութեան սեռակէտով շահեկան կեդրոններէն մին կը կազմեն: Եւ զբոսաշրջիկը, առաջնորդ գիբբը ի ձեռին, կը Կ. նէ իր օրուան ժամերը եւ կ'ուզէ արդ Գահիրէն ճանչնալէ առաջ, նախ հինովը զբաղիլ: Եւ ստուգել տեղերը չ'է որ կը պակասին:

Ըսուած է թէ իսլամ աշխարհը երեք տարբեր կեդրոններ ունի — Կ. Պոլիսը, քաղաքակտան կեդրոն. Մէքքէ կրօնական կեդրոն. եւ Գահիրէ, իմացական կեդրոն: Եւ ասոր ամենէն պերճախօս ապացոյցն է էլ—Ազհարը, իսլամ աշխարհին համալսարանը իր ուսանողներուն մեծակ թուովը պակասուելի հնութիւն մը ունի. հաստատուած ըլլալով 971ին ձուհարէ, Բերքը շինուած է 1176ին Սալախտինէ, անոր մէջ կը գտնուի Մէհմէտ Ալիի մզկիթը եւ ուր թաղուած կայ Ստիվական գերդաստանին հիմնադիրը: Շահեկան են հնութեան թանգարանը իր մոմեաներով, ինչպէս նաեւ կիզէի կենդանաբանական պարտէզը, որ բաւականին ընդարձակ վայր մ'է:

Անգին Բուրբերը, որոնց ստորոտը մղուեցաւ դար մը առաջ Նաբոլէօնի պատմական մարտը, Բայց այն օրէն ի վեր որ արեւմուտքի ունի իրաներ հաստատ ոտք դրին հոն՝ Բուրբերուն ըստորոտը, երբ գէմը հաստատուեցաւ, եւ բոլորական ճաշակաւ պանդոկ մը — Սիքնա հաուզ »ը, եւ հանրակոտը մայրուքաղաքին հետ անմիջական յարաբերութեան գրաւ դառնալ. այդ Բուրբերը, Սիքնաքը, Պէտէկէրն եւ անապատի բոլոր այդ աւազները կ'որոնցուցին մեծակ մաս մը իրենց փերիկեան, քիչ մ'ալ արեւելեան հմայքէն:

(Շարունակելի)  
ՅԱՐ. Լ. Ս. ՇԱՄՔԵՆՍԻ

**ՔԱՂԱՔԱԿԱՆ**  
Հինէն ՆՈՐԷՆ

Ահաւասիկ շունթալից վերնագիր մը, որուն ներքեւ շատ մը բաներ կրնան գրուիլ. և ամենէն համբալ գրիչն անգամ՝ քաղաքական յոգևածագրի Տէպիլն ընելով անուն մը շինել պիտի երազէր, առիթէն օգտուելով ու քանի մը անհասկնալի տողեր իրարու քով շարելով:

«Արշալոյս» որ երկար գաղարէ մը յետոյ — պատճառը մի՛ հարցնէք, հիմայ ժամանակը չէ — վերերեւման որոշումը կուտայ, լաւ համոզուած է թէ՛ իր ընթերցողներէն շատերը «քաղաքական» վերնագրով տեղադրուած յոգևածի մը ընթերցման ծարուր ունին... այսպիսի հանդիպումէ մը օգուտ քաղել չ'ուզելը՝ Հերպերթ Սթենսելի խրատականներուն դէմ գերադրապէս մեղանչել պիտի նշանակէր: Ծուլանալու հարկ չ'կայ ուրեմն, մանաւանդ՝ աւարտող տարւոյն այս

վերջին քանի մը՝ օրերուն մէջ, արդէն ամէն մարդ ալ իր տարեկան հաշուեկալը ընելով զբաղած է, նախորդ տարիներու հաշուեկալներուն վրայ հատ մը ևս աւելցնելով մոռացութեան մատնելու համար: Մե՛քքէ ինչո՛ւ պիտի չեղինք այդ ընդհանրացած սովորութիւններէն:

**Սկսինք ուրեմն.**

Նախագահ Բուզլէթի ալբերէնարանը սրբագրելու համար անցեալ տարի ըրած ջանքերէն յետոյ, որ պահ մը Ուաշինկթոններու աշխարհին գիտնականները ոտք հանեց, առանց գլխէ հանելու, ֆրանսայի կղերական շարժումը սկսաւ, ուր բոյն դրած սև ծրարները՝ իրենց լազաղութիւնը Էջանգիսար վրդովուած ու քաղաքական աչքեցութիւնը տիրող իշխանութեանը մշտնադաւանող շարունակներուն սակ ընկճուած տեսնելով շմորածի հանգ վայնասուններով օգը թնդացուցին անօգուտ...:

Քաղաքական հորիզոնը երբեմն ամպամած ու մթադին՝ հոս ու հոն անակնկալ տարափներով շփոթութեանց մատնելու հաւանականութիւններ ցոյց կուտար թէ՛ սակայն Լա Հէյի լազաղութեան վեհաժողովին վերահաս դուժարումը իր հնգամսեայ վիճարանութիւններով վերջ զննել կարծեց սպառնացող վտանգներուն, հոգ չէր թէ մէկ քանի կէտերու վրայ տակաւին արիւնահեղութիւններ տեղի ունենային: Ընդհանուր երևոյթը փրկուած էր և լազաղութիւնը մասամբ վերահաստատուած:

Մակեդոնական շարժումները, որոնք տեւականի հանգամանքներուն ներքեւ կը շարունակուին, հակառակ ցոյց տուած բարի կառնցողութիւններուն՝ դեռ անհետեւեք կը մնան, և ո՛վ գիտէ թէ՛ քաղաքագէտներու փափկանկատութեանց երեսէն՝ տակաւին մինչև ե՛րբ ալ ազատութեան հեշտօրը երազանքներով պիտի տարուբերին, մարտիրոսանալու պատրաստ այդ քաղաքները:

Ասոնց մէջ աննկատելի իրողութիւն մը չէ այն ամենախիստ վարմունքը, որ աւարտող տարիշրջանին մէջ Պուլկարիա ցոյց տուաւ յոյն եղբայրներու հանդէպ՝ անակնուներ ի զրկանքներու ենթարկելով զանոնք իր հողին վրայ:

Դէպքերու այս կցկոտըր շարքերուն մէջ կարելի չէ ամփոփել ու սեղմել բազմագունակ պատահարներու այն շարքը որ զանազան կեդրոններու մէջ այլ և այլ ձեւերու ներքեւ տեղի կուսենան, և շատ անգամ քաղաքական աշխարհը ցնցելու ընդթ ունին:

Ամէն պարագայի մէջ, պէտք է ըսել թէ՛ ամենէն զարգացեալ համարուած աղքատ մէջ անդամ, դէպի բարիշրջում նորանոր քայլեր կ'առնուին: Աշխարհը աշխարհ ըլլալէ մինչև մեր օրերը այդ սրբագրութիւններէն անցած է. ու մենէ յետոյ ալ քիչ կամ շատ տարբերութեամբ գրեթէ միևնոյն ընթացքով և համոզումներով այդ փոփոխու-

թիւններուն պիտի ենթարկուի: Անյեղի է իրաց այս ընթացքը:

Այսօր մեծ պետութիւն մը իր ձեռքին մէջ ունեցած լայնատարած գետինները՝ բաւական չ'համարելով, ուրիշ տեղերու մէջ նորանոր հատուածներ ձեռք ձգել կը ցանկայ ու զաղթականութիւն մը կ'ստեղծէ. վաղը՝ ուրիշ մը՝ իր կառավարական ձեւերուն մէջ փոփոխութիւններ մտցնել պիտի ուզէ, իր ժողովուրդին համարումէն չի զրկուելու համար: Ու այսպէս շարունակաբար:

Եթէ ստուգիւ Լա Հէյի ծանօթ գումարումները կարենան վերջ զննել կամ չափաւորել արիւնուշտ ճակատամարտները, միւս կողմէ լուսաւորեալ ազգերու ներքին խնդիրները լրագրաց սիւնակները գրաւելու և խորհրդածութեանց բաւական նիւթ պիտի հայթայթեն:

Քանի որ քաղաքական խնդիրներու կարգին մէջ ֆրանսայի ժողովուրդին միտքը յուզող եկեղեցական բաժանումին խօսքը ըրինք, կարծէ որ՝ իբր կարևորներէն մին, յիշատակել չի մոռնանք այսօրուան Իտալիան զբաղեցնող հակակերական շարժումն ալ: Կրօնի ուսուցումը պարտաւորիչ ըլլալուն դէմ մղուած պայքարն է այն, որ բաւական բուռն բանավէճերու դուռ բացալ է վերջերս:

Մինչև մօտ ատեններ կրօնական ուսումը պարտաւորիչ էր իտալական նախակրթարաններուն մէջ բայց հակակերական կուսակցութեան յարուցած բողոքին վրայ, որոշուեցաւ որ կրօնական ուսումը դադարի պարտաւորիչ ըլլալէ և յետ այսու կամաւոր դասառութեանց կտրվը անցնի:

Այսօր Երեսփ. ժողովէն կը պահանջուի որ կրօնական ուսումը նոյն իսկ կամաւոր բողոքովին վերցուի վարժարաններէն և կրթական նախարարը այդ գաղափարին կուսակցից է եղեր: Վերջերս ուսուցչական ժողովներ գումարուած են, կրօնական ուսման շնչումը բաժարձակապէս պահանջելով: Ատոնց առարկութիւնները այն տրամաբանութեան վրայ հիմնուած է թէ՛ շիտակ բան չէ անհաւատ մարդոցմէ պահանջել որ եկեղեցական ըսկզբունքները իրենց խնամքին յանձնուած տղայոց սուսնդեն:

Իտալական դահլիճը նախամեծար կը համարի կրօնական ուսումը բողոքովին ջնջել վարժարաններուն մէջէն, քան թէ անուանապէս պահել զայն:

Ահաւասիկ կրօնական ամենապարզ ներքին խնդիր մը, որ բուն իրականութեան մէջ կղերին ազգեցութիւնը տեղոյն վրայ սահմանափակելէ զատ, քաղաքական դիպուածներու երանդն ալ կրնայ փոխել, նորանոր հարցեր դնելով յառաջդիմասէր և ընդօրինակելու ընդունակ ազգերու կանանչ սեզաններուն վրայ:

Պէտք է արդեօք մտածել թէ՛ « և եղիցին մի հօտ և մի հովիւ » ի նախաքայլերը աւնուելու նշաններ են այս ամենը:

(\*) Ուղեցոյց գիրք մ'է:

Ա.Չ.Պ.Ա.ՅԻՆ  
ԼՈՐԵՐ

ՍՂԷՔՍՆԴՐԻԱ

Պոլսական թերթերու մէջ հը-  
րատարակուած տեղեկութիւններուն  
նայելով, Ազգ. Պատրիարքարանը  
պէտք եղած հրարանքները տուած  
է Եղիպտոսի Գեր. Առաջնորդին,  
Ազգ. քահանայրից Երեսփոխան ընտրու-  
թեանց փութով ձեռնարկելու հա-  
մար:

Մէկ երկու շաբաթէ ի վեր ն.  
Գերապատուութիւն Ազգ. քահանայրից  
կը գտնուի. հարկաւ այս առիթէն  
օգտուելով նախնական անհրաժեշտ  
պատրաստութիւնները տեսնուեցան  
ընտրական գործողութիւնները ան-  
աղմուկ պայմաններու մէջ կատա-  
րելու առաջադրութեամբ:

Արդէն Պոլսոյ Ազգ. Պատրիար-  
քարանձաղ օգտուած այժմու հանգա-  
մանդներէն, Եղիպտոսի համար  
քանի մը յօդուածներէ բաղկացած  
կանոնագիր մը պատրաստած է Ա.  
առաջնորդ հայր սուրբին ընտրական  
ձեռնարկներուն դէմ հաւանական  
երեւցած դժուարութեանց առաջը  
առնելու համար: Միայն խնդիր է  
դիտանալ թէ՛ դժուարահաճ Ազգ. ք-  
ահանայրիցիք նոր զրկուած կանոնա-  
գրին դէմ ալ ընելիք առարկու-  
թիւններ պիտի ունենան, թէ՛ ար-  
դէն այս մասին քուէարկուները  
զեկավարող շրջանակներու մէջ վերջ-  
նական համաձայնութիւն գոյացած է:

Այս մասին մեր Ազգ. քահանայրից  
թղթակցին հետզհետէ տուած տեղե-  
կութիւններուն պիտի սպասենք:

ԳԱՆՔԻՆ

Իբր տեղական ազգային գործեր  
երբ Ազգ. քահանայրից ընտրութեանց  
մասին խօսուեցաւ, պէտք չէ մտածել  
թէ Գահիրէի մէջ ազգային կեանք  
չկայ և անշարժութիւն կը տիրէ:

Մենք ալ ունինք մեր ազգա-  
յին Առաջնորդարանը և ազգային  
պաշտօնէութիւնը: Որքան անհաշիւ  
և Ազգ. քահանայրիցիք, ժողովներ ու ժո-  
ղովականներ:

Մօտ օրերու մէջ տեղի պիտի  
ունենայ, կ'ըսեն, Պատկ. Երեսփո-  
փողովէն պակասեալ և վիճակաւ  
դապարեալ անդամոց տեղ նոր ընտ-  
րութիւնները, որ անցեալ տարիէն  
արդէն «կարգ խնդրոց» են մէջ կը  
դառնուի:

Վարչութեան Պատ. Բաղաք.  
Ժողովը իր շաբաթական նիստերը  
կ'ընէ և իր նախորդէն կտակուած  
կալուածական և այլ կարգ մը խըն-  
դիրներով կը բաղկանայ:

Մնացեալ հոգաբարձութիւն-  
ներն ալ — կալուածոց, Եկեղեցւոյ,  
Մարմինայի և ազգ. քահանայրիցի  
չեն մնար, որոշեալ օրերուն մէջ ի-  
րենց կանոնաւոր նիստերը ընելէ  
կտու, երբեմն արդարեալ նիստեր  
ալ գումարելու պէտք կուենան:  
Յայս ունինք թէ՛ հետզհետէ մօտէն  
տեղեկանալով ատոնց գործունէու-  
թեանց արդիւնքներուն, անոնցմէ  
կարևորները այս էջերուն մէջ ար-  
ձանագրելու առիթը պիտի ներկա-  
յանայ:

ՆԵՐԿԱՅՈՒՅՈՒՄ

Կիրակի երեկոյ Խտիվական օ-  
բերային մէջ ն. Բարձրութիւն Խը-  
տիվին հովանաւորութեան ներքե  
ներկայացուած մը տրուեցաւ ի նը-  
պատ հայոց բարեգործական ընկե-  
րանութիւններուն:

ԱՄԵՐԻԿԱ

Արտասահմանի հայերուն հա-  
մար հետաքրքրական խնդիր մը կա-  
րելի է նկատել ամերիկահայոց ա-  
ռաջնորդական ընտրութիւնը և նոր-  
ընտիր Առաջնորդին ու զինքը ընտ-  
րող վարչութեան մէջ «ճանապարհ-  
որհած խնդրոց» համար կատարուած  
սակարկութիւնները:

Այս մասին «Լուսաբերի» մէջ  
հետեւեալը կը կարգանք.

«Ամերիկայի հայոց Ընդհ. Ժո-  
ղովը նորընտիր Առաջնորդին ճանա-  
պարհած խնդրոց համար որոշած էր  
«600 տուար, բայց այդ գումարը  
«գոյացնել կարելի չէ եղած: Վեր-  
աջերս միայն, Ազգ. քահանայրից  
«կուած է 375 տուար, այսինքն 75  
«Եղիպտ. ոսկիի գումար մը, որպէս-  
«զի Եզնիկ Սրբազան (Ապահոսի)  
«Պարսկաստանէն հասնելուն գանձե-  
«լով ուղեորութիւնը շարունակէ  
«դէպի Ամերիկա: Միւս կողմէ Եզ-  
«նիկ Սրբազան աճաւանական համա-  
«րելով որոշուած 600 տուարը պա-  
«հանջած է որ 1000 տուար զրկուի,  
«դժգոհութիւն յայտնելով նաև  
«գործողութեան յայտնելու համար»:

ՕՐՅԹԵՐԹԸ

Ստացած ենք Ազգ. Մկրտիչ Էֆ.  
Անդրանիկեանի ստորագրութեամբ  
շրջաբերական յայտարարութիւն մը  
որով հրաւեր կը կարգադրուի Եղիպ-  
տաքանակ ազգայնոց 2000 բաժնե-  
տոմսերու համար բացուած բաժա-  
նորդագրութեան մասնակցել, մեծ  
ծաւալով օրաթերթի մը հրատարա-  
կութեան ձեռնարկուելու համար:

Նպատակը ինքնին մեծ կարե-  
ւորութիւն ունի արդարեւ, և այս  
մասին մեզի տրուած նոր տեղե-  
կութիւնները պիտի հաղորդենք «Ար-  
շալոյս» ի ընթերցողներուն:

ՏԵՂԱԿԱՆ  
ԼՈՐԵՐ

ՏԱՐԵՒԱՐԶ

Ա. Տոյս 8ին աննախընթաց շը-  
քեղութեամբ կատարուեցաւ Բարձր.  
Խտիվին Գահակալութեան տարե-  
գարծը:

Կէս օրէ յետոյ ժամը 5ին ըս-  
կըսան հանդէսները, և կէս գիշերէ  
վերջ մինչև ժամը երկու տեւեցին:  
Հանդիսասաններու անթիւ բազմու-  
թեարը մը լցուած էր Պապ — Էլ-  
Հատիտէն մինչև Ապտինի հրապարակը  
որ հրաշալիօրէն լուսադարձուած  
էր: Կարելի չէ նկարագրել այն ու-  
ղեւորութիւնը որ կը սիրէր նուպար  
Բաշա, Գամէլ, Ապտին պողոտանե-  
րու և օրեկայի հրապարակը լեց-  
ուած բազմութեան մէջ:

Հանդէսին պարտէզը — այս կարգի  
հանդէսներ սարքելու համար միակ

յարմարագոյն վայրը — անհամար լոյ-  
սերով ողողուած էր, և պարտէզին  
այլ և այլ մասերուն մէջ կատար-  
ուած նուագածութիւններն ու հեշ-  
տօրօր մեղադրները հոն հաւաքուած  
հանդիսասանները կ'զգլխէին:

Նորին բարձրութիւնը շրջապատ-  
ուած իր հետեւորդներով, որոնք  
բարձրաստիճան անձնաւորութիւն-  
ներէ կը բաղկանային, ներկայ ե-  
լաւ Օրեւրա թատրոնին մէջ օրուան  
հանդէսին համապատասխանող և  
մասնաւոր հոգածութեամբ պատ-  
ըաստուած ներկայացման:

Եղիպտաքանակ ամեն ազգի պատ-  
կանող ժողովուրդին այս համակրա-  
կան ցոյցերը անհերքելի դրաւա-  
կաններ են թէ՛ ն. Բարձրութեան  
հովանոյն ներքե հանդատուէտ  
կեանք մը կը վայելեն:

ԵՐԵՎԱՆԻ

Ուրբաթ երեկոյ 10 Յունուար  
(ն. Տ.) Բ. Խտիվը ի պատիւ Կ.  
Պոլսոյ պարսկական դեսպան բրէնս  
Մերզա Ասկար խանի հացկերոյթ մը  
տուած է Ապտինի պալատան մէջ:

Ն. Բարձրութեան հրաւիրեալ-  
ներէն մին եղած է Ազգ. քահանայրից  
Պարսկական հիւպատոս Վահմ. Միհ-  
րան Խան Գալֆահան, որ միևնոյն  
ատեն կը վարէ այժմ Գահիրէի  
Պարսկական հիւպատոսարանի գիւա-  
նագիտական գործերը:

Երեկոյթի ամբողջ տեւողութեա-  
նը Բ. Խտիվին յատուկ նուագա-  
ծուաց խումբը ընտիր կտորներ նը-  
ւագած է:

ՊԱՇՏՈՆԱՏՈՒՆՆԵՐԸ

Գուրպան պայրամի տօներուն  
պատճառաւ Գահիրէի և Ազգ. քահա-  
նայրից պօրսաները, կառավարական  
պաշտօնատուները և վարժարանե-  
րը մինչև առաջիկայ ուրբաթ 18  
Յունուար զոց պիտի մնան:

ՄԱՍԻՍԻՅԻՆ ՈՃԻՐԸ

Կիրակի օրը սոսիկանութիւնը  
սոսկալի ոճի մը երևան հանած է,  
որուն մանրամասնութիւններով կըզ-  
բաղին տեղական թերթերը:

Ձօհն է Եւրօր Խուրի անունով  
33 տարեկան Սուրիացի մեծահա-  
րուստ ձիւս վաճառական մը, ե-  
րբ օրերէ ի վեր անհետացած ըլ-  
լալուն պատճառաւ, եղբայրը կաս-  
կածելով սոսիկանութեան լուր տը-  
ւած է փնտռու քննի կատարելու  
համար:

Վերջապէս զօհնի դիակը գաշ-  
տին մէջ թաղուած կը գտնուի:

Նախնական քննութիւններէն  
այնպէս հաստատուած է թէ՛ այս ըս-  
պանութիւնը գործողները եղած են  
երկու զինուորներ, որոնք Ապպա-  
սիլէի թնդանօթածիգ զօրազինին կը  
պատկանին եղեր:

Ոճիբը հետեւեալ պարագաներու  
ներքե գործուած է:

Մեղսակիցներէն մին սպանու-  
ածին պատկանող ձի մը կը հեռա-  
ցնէ ախոսէն, և յետոյ սիրով լուր  
կը արուի թէ՛ ձին դաշտին մէջ կը  
կ'արածի:

Երբ տէրը ձիուն գտնուած տեղը  
կերթայ, արդէն ծուղակին մէջ  
բռնուած ըլլալով նախ կը կողպտեն  
և յետոյ խնդրելով այնտեղ կը թա-  
ղեն աւաղին մէջ:

ԱՅԼ ԵՒ ԱՅԼԻՔ

— Գանի մը ամիսներ առաջ Ե-  
րիտասարդ ամերիկացի մը էմիլ-  
Սիմօն անունով, օթօժպիլով պը-  
տոյտ մը կատարած միջոցին կնոջ մը  
մահուանը պատճառ կըլլայ և Տրէզ-  
տէնի մէջ կը բանտարկուի:

Երիտասարդին մայրը, որ այդ-  
պահուն Գերմանիա կը գտնուի, և  
ինչպէս կերելի միջոցներ ալ եղած  
ըլլալու է, իր զաւակին առժամ-  
եայ ազատ արձակման համար մէկ  
միլիոն մարք փոխանորդագին կը-  
առաջարկէ, բայց կը մերժուի:

— Ընտանեկան ահաբեկ առամ  
մը պատահած է Եւրօթլանտի (Գա-  
նիս) մէջ հետեւեալ պարագաներու  
տակ:

Ամուսնալուծեալ կին մը, Մա-  
րէն Նելսէն անունով, ագարակա-  
տէրի մը քով կընդսւնուի իբրև  
մատակարարուհի և ստեն մը ծա-  
ռայելէ յետոյ երբ կ'իմանայ թէ  
պիտի ճամբուի, յուսահատութեան  
նախ իր երեք զաւակները կը կախէ  
և յետոյ ալ տան տիրոջ նոյպէս ե-  
րեք զաւակները:

Վայրագ կինը իր գործած ո-  
ճիբին ահաբեկութեանը վրայ անդ-  
րագառնալով, վերջապէս ինքինքն  
ալ կը կոխէ:

— Գործաւոր մարդ մը թիրօլի  
մէջ ճամբան ձգուած ծրար մը գտած  
է, որուն պարունակութիւնը երեք  
միլիոն մարքի անգլիական պանք-  
նօթներ են եղեր:

Մարդոց բերանին ջուրբը վազ-  
յունելու չափ գումար պարունա-  
կող այս մեծահարուստ ծրարը՝ եր-  
ջանիկ գործաւորէն կողմէ կը յանձ-  
նուի անգլիական հիւպատոսարանին:  
Փառուած են աւելի լայն մը-  
տածող մարդեր ալ, որ այդպիսի  
գումար մը հիւպատոսարանին յանձ-  
նելը անխոհեմութեան արդիւնք նը-  
կատած են, քանի որ այդչափ գու-  
մարով կարելի էր աւելի կարեոր  
գործեր տեսնել . . .

ՉԵԿՈՒՑՈՒՄ

«Արշալոյս» ի ներկայիս օր-  
պարանակակ կարգադրութեանց եւ  
այլ բանաւոր պատճառներով ո'չ մի-  
այն յայտարարութիւն կրեց, այլ եւ  
ակաւսայ սխալներ ալ սպրդած եւ:  
Այս պատճառաւ ընթերցողաց ներ-  
դասութիւնը կը խնդրուի:

Յացող քիւր՝ փոխանակ Եւ-  
րաս օրուան, ինչպէս ծանուցում է  
թերթին ձեւակարգ, Ս. Ծնունդին յա-  
ջորդող Չորեքշաբթի օրը հրատարակ  
պիտի կըլլէ:

ԻՄԲ.

ԱՅՁ

Գործակալներու Պէսքը կայ:  
Դիմել ի մարտութեան հասցէին:

# ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԾԻԱԽՈՏԻ ԵՒ ԸՆՏԻՐ ՍԻՎԱՐԵԹՆԵՐՈՒ ԳՈՐԾԱՐԱՆ

ՎԱԿԶ - ԷԼ - ՊԴՐՔԷ ՓՈՂՈՑ ԷՕՂՊԷՔԻՅԷ



## ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐՔ

Ն . ԵՒ Ա . ՀԱՃԷԹԵԱՆ ԵՂՐԱՐԲ

ՅԱՏԿԱՆԻՇԸ ԻՐԵՆՑ ՎԵՐԱՊԱՀԵԱԼ Է .

Արևելեան ընտիր ծխախոտներէ պատրաստուած թարմ սիկարէթներ անմրցելի աժան գներով ունենալու կամ վայելչու համար , ամէն անգամ և ամէն տեղերէ աւելի՛ պէտք է նախնարել մեր վաճառատունը :

Առաջնակարգ տեսակներէ Եւրոպական սիկարէթներու լաւագոյն զանազանութիւնները գտնելու համար հարկ չ'կայ հոս ու հոն ժամաւաճառ ըլլալու . բաւական է անգամ մը անպատճառ այցելել մեր վաճառատնին :

Պարսկական ամենաընտիր թէմպէրի ալ և այլ տեսակները բացի մեր վաճառատունէն , ուրիշ տեղերէ գնելը պարզապէս սխալի է :

Վեր վաճառատունը վերջապէս , գիներու աժանութեամբ , տեսակներու բազմազանութեամբ ու ճոխութեամբ և այլ ամէն տեսակէտներով , և մանաւանդ գործածել որոշած ապրանքներուն թարմութեամբը անմրցելի է , որուն անժխտելի ապացոյցներէն մին ալ զարգացած եւրոպացիներէ օրրստօրէ մեծ քանակութեամբ և ստուար թուով եղած յանձնարարութիւններն են :

Ն . ԵՒ Ա . ՀԱՃԷԹԵԱՆ ԵՂՐԱՐԲ

## ՄԻՆԿԸՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ՄԻԱԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ Ժ . ՆԱՅՏԼԻՆԿԷՐ

Պալաքի փողոց . Խաղնէտարի սեփականութիւն , Պրիսթօլ Օթէլի ճիշտ դիմաց , Գաֆէ Տը Լա Պուրսի կից

Հին եՒ ՆՈՐ ԱՇԽԱՐՀՆԵՐՈՒ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՆ ՄԷՋ ՄԱՍՆԱՃԻՒՂԵՐ ՈՒՆԻ


Աշխարհի ամենէն լաւագոյն կարի մեքենաները ՄԻՆԿԸՐՆԵՐՆ ԵՆ Եւ ասոնցմէ մինչև ցարդ 17,000,000 ծախուած է :

400 աւելի վիպայական եւ մեքանիկ վարձատուած , երաշխաւորեալ մեքենաներ ,

ԱՄԵՆԷՆ ՄԵԾ ՎԱՐՉԱՏՐՈՒԹԻՒՆԸ  
ԱՌԱՋԻՆ ՄՐՅԱՆԱԿ

Փարիզի 1900 ի Տիեզերական արուեստահանդիսին մէջ ստացած է .  
ՀԱՌՔԱՅՈՒՉ ԲՐՈՒՍԻՈՑ ՀԱՅԹԱՅՈՒՉ ԱՆԳՂՈՑ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ  
ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԱՐՔՈՒՆԻՔԻՆ ԵՒ ԹԱԳԱՒՈՐԱԿԱՆ ԱՐՔՈՒՆԵԱՑ  
ՀԱՅԹԱՅՈՒՉ Ն . Բ . ԽՏԻՎԱԿԱՆ ՏԱՆ

Կեղծերէն զգուշանալ ,  
ուշադրութիւն դարձնել  
իւրաքանչիւր մեքենայի  
վրայ ՄԻՆԿԸՐ յատկանշիմ



Գին ՉԱՓԱՒՈՐ

Ձրի դասեր և նորոգու-  
թիւններ , ՄԻՆԿԸՐ մեքենա-  
յից համար , յաճախորդաց  
տուններուն մէջ :

Վճարմանց դիւրութիւն

Փոխանակութիւն հիներու  
և նորոգութիւն ամեն կարգի  
Մեքենայից

## ՄԵԹՐԸ ԵՅԱՐՈՒԹԻՒՆ Լ . Ս . ՅԱՍԼԵԱՆ

( Փ Ա Ս Ս Ա Ր Ա Ն )

Հաստատուած է Շարա Ապա-էլ-Ալիզ , Կալէնդի թատրոնին դէմը .  
Խորհրդակցութիւնը , բացի կիրակիէ , ամէն օր ժամը 4 էն 6 ( Յ . Մ . )

## ՄԵԾ ՍՐՃԱԲԱՆ ԷԱՅԿԱԿԱՆ

GRAND CAFE ARMENIEN ( Le Caire )

Սայն Սրճարանը որ Միսսն էլ Խաղնէտարի օդատուն հրապարս  
կիին վրայ կը գտնուի , իր մտքորոտիւն և ընդարձակութեամբ տեսակի  
մէջ յարմարագոյններէն մին է հանգստաւէ ժամանակ անցնելու .  
Սրճարանը յաճախողներ վեոյիշեալ առանելոյրիւններէն զս  
նոն պիտի գտնեն նաև շաւաղոյն ընկերիներ . նոր և ընկալ պիւրատ .  
ներ և անթերի սպասարկութիւն :

ՍԵՓՀԱԿԱՆԱՏԵՐ  
ՄԻՍԱՐ ՍԱՐԳԻՍԵԱՆ

## ՏՕՔՔ ԵՍՔԷՐ Լ . ՃԻՔՕՊԵԱՆ

ՇԱՐԱ ՆՈՒՊԱՐ ԲԱՇԱ , ԹԻՒ 20

Ամերիկայի համալսարաններէն  
վիպեալ և անուանի հիւանդանոցնե-  
րու մէջ գործնական փորձառութիւն  
տացած բժշկուհի . յաջողակ վե-  
րահատ՝ ենթակային աւտոնց ցաւ  
պատճառելու :

Մանկաբարձուհի և մասնագէտ՝  
կանանց ծննդական գործարաններու  
և ափրոզիտեան ախտերու , իսկ մա-  
նուկներուն՝ ամէն տեսակ հիւան-  
դութիւններու :

Կատարեալ խնամքով և գի-  
տական նորագոյն մեթոտներու շնոր-  
հիւ հիմնապէս կը բժշկէ իր խնամոց  
յանձնուած հիւանդները :

Հիւանդ կ'ընդունի առէն օր առա-  
ւօտեան ժամը 9-11 եւ կիս օրէ յետոյ 2-5

Կիրակի օրերը 3 էն 5 յետ միջօրէի  
Սմէն երեւոթի աղաւաց օրի  
ղարմանում :

## ԾԱԽՈՒ ԳԻՐՔԵՐ

ԺՈՂՈՎՈՒԳԻՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԸ

Թիւ 1 Թրքուհին 50 սանթի

« 2 Հիւլէն 50 »

Ժողովուրդին Մատենադարանի գր-  
քոյիներուն հեղինակն է Տ . Ա . Պալ-  
եան , եզրպատահայոց քաջ ծանօթ իր  
հրատարակութիւններով եւ յօդուածնե-  
րով , Թրքուհին , պատկեր մ'է Ուրֆայի  
կոտորածին եւ Հիւլիսի եզրպատգաթ  
հայութեան առաջին օրերուն մի մա-  
րանկարը յեղափոխական գործունէու-  
թեանց վրայ խորհրդածութիւններով :  
Դիմել « Արշալոյս » ի խմբագրութեան  
կամ ուղղակի հեղինակին՝ հետեւեալ  
հասցէով :

A . BALIAN

( Egypte )

Le Gaire

## Տ Պ Ա Ր Ա Ն

### ԱՐՇԱԼՈՅՍ ԼՐԱԳՐԻ

### ՀԻՄՆՈՒԱԾ 1900 ԻՆ

ՀԱՍՏԱՏՈՒՄ Է Ի ՇԱՐԱ ԱՊՏ-ԷԼ-ԱՋԻԶ  
ՇԷՐԻՑ ԲԱՇԱՅԻ ՊԱՐՏԷՉԻՆ ԴԷՄ

Կ'ընդունի տպագրական ամէն տեսակ յանձնարարութիւններ .  
Նամակագրութիւն , աղբարարութիւններ , այցեքարտեր , մահաղջներ ,  
գիրքերու և պրօշուրներու տպագրութիւններ և այլն :

Յանձնարարութեանց համար սակարկուած գնոյն կէտը կանխիկ է ,  
իսկ մնացեալ կէտը յետ տպագրութեան՝ յանձնման պահուն վճարելի :  
Յանձնարարութիւնը ամենայն ճշգրտութեամբ պիտի կատարուին :

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ ՏՊԱՐԱՆԻ